

Արտակարգ

ԽԵՐԿԹ

«Արտակարգ» թերթի անվանումը, ՎՊՈՒՄ-ի օգտագործումը

URL: <http://www.emergency.am>, E-mail: tert@emergency.am



Սովորենք հաշտ ապրել նաև երկրաշարժերի հետ



Սպիտակի երկրաշարժից քսան տարի, հիսուն, ութսուն, հազար, տասը հազար, քսանչորս հազար տարի անց... մենք վստահ ենք ու քաջ գիտենք, որ մեր լեռնաշխարհում երկրաշարժեր եղել են ու էլի կլինեն. ե՞րբ, որտե՞ղ, ի՞նչ ուժի՞ ոչ ոք ասել չի կարող, բայց որ լինելու են, եւ ամեն տարի էլ լինում են ու կշարունակեն լինել՝ համոզված են համարյա բոլորը (տառապանքս փորձ ունի՝ Հայաստանի պատմական ու նորագույն շրջանի երկրաշարժերի քարտեզն աշխարհակործան այդ ցնցումների լուռ վավերագիրն է):

Սա այն կարևոր տեղեկատվությունն է, որը քսան տարի առաջ չուներինք:

Երջանիկ անգիտության մեջ էինք: Խորհրդային քաղաքացիական կարգի հզոր մեքենան զբաղված էր «հակառակորդի» միջուկային հարվածները հետ մղելով, իսկ բնակչության ու նրա հոգսերի հետ կապ չուներ կամ ո՞վ ուներ դրա ժամանակը, բայց, այնուամենայնիվ, լա՛վ ժամանակներ էին. մեր երկրում չկար հոգս ասվածը, չկար աղետ, չկային

վթարներ: Կար, բայց ժողովրդի աչք ու ականջի համար չէր: Դե եթե չկա, ուրեմն այն կանխարգելելու խնդիր էլ չկա, հետեւանքները մեղմելու անհրաժեշտություն չկա, փրկարարի կարիք չկա:

Գ Ութսունութին մենք չունեինք մի մարմին, որը կարող էր կազմակերպել, իրականացնել ու համակարգել որոնողափրկարարական աշխատանքները, նախապես մշակել ռիսկերի նվազեցման ծրագրեր:

Գ Հայաստանի ամբողջ հյուսիսը փլատակների մեջ էր, իսկ տեղեկատվություն չկար, եւ բոլորս անգիտության մեջ էինք. պատկերացում չուներինք համադեղի իրական չափերի եւ մեր վարքականոցների վերաբերյալ:

Գ Մենք չէինք պատկերացնում, որ նման երկրաշարժ կարող է լինել. չուներինք սեյսմաշրջանացման քարտեզ, ճշտված չէին խզվածքներն ու բեկվածքները: Ամենահզոր երկրաշարժը, որը դիմագրավելուն նախապատրաստել էինք շենքերը՝ յոթը բալլ էր: Երկրաշարժն ինը բալլից հզոր էր:

ՅՅ ռձՅՅ Ի ձձԱՅՅՅԱ 4-Ո՞՞ ԼՇՁձՍՍ

Արտակարգ իրավիճակների 2007 թվականի վիճակագրություն


Համաձայն ՀՀ ՏԿՆ Հայաստանի փրկարար ծառայության տվյալների՝ 2007 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցվել է ընդհանուր թվով 7578 արտակարգ իրավիճակ (2006թ.՝ 7138), որոնց հետեւանքով գոհվել է 529 (2006թ.՝ 481) եւ տուժել 5866 (2006թ.՝ 4577) մարդ: Մասնավորապես՝ ՀՓԾ կողմից արձանագրվել է հրդեհի 2284

(2006թ.՝ 2541) ահազանգ, որոնցից հետագայում հրշեջ տեսչության կողմից որպես հրդեհ հաշվառվել է 934 դեպք: Հրդեհների հետեւանքով գոհվել է 20 (2006թ.՝ 40), տարբեր աստիճանի այրվածքներ ու վնասվածքներ ստացել 42 (2006թ.՝ 41) մարդ, պատճառվել է շուրջ 345 մլն. դրամի նյութական վնաս:

ՅՅ ռձՅՅ Ի ձձԱՅՅՅԱ 7-Ո՞՞ ԼՇՁձՍՍ



«Էլիտ Գրուպ» առաջարկում է կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Դուք ցանկանում եք լավագույնը, շքեղն ու հարմարավետը, ապահովն ու անվտանգը, նախընտրում եք ճարտարապետական ինքնատիպ լուծումները, գերժամանակակից ինժեներատեխնիկական հագեցվածությունը, զարգացած ենթակառուցվածքը, բարձրակարգ սպասարկումը, ամենահարգին ու հեղինակավորը:

Այլեւս մի փնտրեք Ձեր ուզածն արտասահմաններում, այն, ինչ երազել եք, այսօր արդեն իրականություն է. «Էլիտ Գրուպը» երեւանի կենտրոնում կառուցում է Ձեր երազանքը: Միակ ընկերությունը Հայաստանում, որն արժանացել է որակի կառավարման ISO 9001-2000 միջազգային ստանդարտի վկայագրի՝ թոփ մենեջմենթի բնագավառում:

Ապահով, սեյսմակայուն եւ էլիտար շենքեր հատուկ Ձեզ համար:

Երեւան, Պուլկիմի 21, ☎ 56-69-22, 56-69-33:

N 1 (226)

18.1.08-24.1.08

Շաբաթաթերթ

Քրոնիկոն

էջ 2, 3, 5

Միջազգային

էջ 2

Երազներից դեպի իրականություն

էջ 4

Ռուսաստանում շենքեր եւ պայթյուն

էջ 5

Աղքատության 10 սովորություն

էջ 6

Երախտագիտություն փրկարարներին եւ գոհության աղոթք առ Աստված

էջ 7

Փրկարարը նաև մարտիկ է

էջ 7

Արտակարգ ժամանց

էջ 8

Գինը 100 դրամ

**Հրդեհներ
 2008 թ. հունվարի 1-ից մինչև
 հունվարի 16-ը հանրապետու-
 քյան տարածքում գրանցվել է
 հրդեհի 93 դեպք:**

Տունը

Հունվարի 1-ին, ժամը 01.53-ին, ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Արարատի մարզի Նոր Խարբերո գյուղի 2-րդ փողոցի 1 տանը: Դեպքի վայր են մեկնել մեկ մարտական հաշվարկ Մասիս-սից եւ երկուսը՝ երեւանից:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 03.12-ին, մարվել՝ 03.20-ին:

Այրվել է Մ. Գեւորգյանի տունը՝ 80 քմ մակերեսով:

Հրդեհի հետեւանքով ստացված այրվածքներից մահացել է վեց տարեկան Անժելա Գեւորգյանը, իսկ երեք տարեկան Սահակ Գեւորգյանը տարբեր աստիճանների այրվածքներով տեղափոխվել է Երեւանի «Այրվածքների եւ ճառագայթային բժշկության կենտրոն»:

Ըստ բժիշկների՝ երեխայի առողջական վիճակը կայուն ծանր է:

Տանիքներ, խոս, թեփ...

Լոռու մարզից տեղեկություն է ստացվել, որ հունվարի 2-ին Ախթալա քաղաքի Ավինեց թաղամասում բռնկված հրդեհից այրվել են Մամիկոնյանի տան բակում գտնվող անասնագոմի տանիքն ամբողջ-

ջությամբ եւ 2 տոննա խտրը:

Հունվարի 3-ին հրդեհ է բռնկվել Արմավիրի մարզի Լեռնագոգ գյուղում գտնվող «Բաղրամյանի հացամթերային ալրաղացի» պահեստում:

Այրվել է 10 տոննա հացահատիկի թեփ:



Հունվարի 11-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Արաբկիրի 19-րդ փողոցի 6 տանը: Դեպքի վայր են մեկնել երեք մարտական հաշվարկ եւ մեկ ջրատար:

Հրդեհը մարվել է ժամը 01.38-ին:

Այրվել է անբնակ տան՝ 100 քմ մակերեսով տանիքը:

Հրդեհի հետեւանքով ստացված 2-րդ եւ 3-րդ աստիճանների այրվածքներով

Երեւանի Այրվածքների կենտրոն է տեղափոխվել 1965 թ. ծնված Ա. Օհանյանը: Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը ծանր է:

Հունվարի 15-ին, ժամը 00.10-ին հրդեհ է բռնկվել Գեղարքունիքի մարզի Լճաշեն գյուղի բնակիչ Միլիտոնյանի առանձնատանը: Դեպքի վայր է մեկնել երկու մարտական հաշվարկ: Հրդեհը մարվել է ժամը 02.40-ին:

Այրվել է 160 քմ մակերեսով տանիքը:

Հունվարի 15-ին հրդեհ է բռնկվել Արարատի մարզի Բաղրամյան գյուղի Շահունյան փողոցի 11 տանը:

Այրվել է Ի. Սարգսյանին պատկանող տան հյուրասենյակն իր գույքով՝ 27 քմ մակերեսով:

Հրդեհի հետեւանքով 1974 թ. ծնված Մարինա Սարգսյանը 2-րդ աստիճանի այրվածքներով տեղափոխվել է Արտաշատի հիվանդանոց:

Ըստ բժիշկների՝ տուժածի վիճակը բավարար է:

Այրվել ու փլուզվել է

Հունվարի 5-ին Տավուշի մարզից ահազանգ է ստացվել, որ ժամը 03.27-ին հրդեհ է բռնկվել Գոշ գյուղի բնակիչ Վ. Վարդանյանի տանը:



Դեպքի վայր է մեկնել Դիլիջանից մեկ մարտական հաշվարկ: Ճանապարհի անանցանելիության պատճառով հրշեջ ավտոմեքենան մոտ 1 կմ հեռավորության վրա կանգ է առել: Շարունակելով ճանապարհը ոտքով՝ հրշեջ-փրկարարները կանչի վայր են հասել ժամը 03.55-ին:

Հրդեհաշիջումը կատարվել է դուլե-րով՝ արտաքին ջրաղբյուրներից:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 04.25-ին, մարվել՝ ժամը 05.50-ին:

Այրվել եւ փլուզվել է տան

ՄԻՋԱԿԱՆ ԳԱԲԱՐԱԹ
 .. Ս Ի Ջ Ա Ջ Գ Գ Ջ Յ Ի Ն Լ ՈՒ Բ Ե Բ ..

Աղբահավաք՝ բանակի օգնությամբ

Հունվարի 7-ից Իտալիայի Նեապոլ քաղաքում զինվորականները ձեռնամուխ են եղել աղբահանության գործին: Դեռ անցյալ տարվա վերջին Նեապոլում բարձրացել էր դժգոհությունների ալիք՝ կապված աղբավայրերի սակավության հետ: Դժգոհ քաղաքացիներն աղբը թափում էին հենց քաղաքի փողոցներում:



Մյուս կողմից Կանաչների միության ակտիվիստները բողոքի ցույցեր են կազմակերպել՝ պահանջելով քաղաքի արվարձաններում այլեւս չբացել նոր աղբավայրեր, որոնք կարող են ազդել Նեապոլի բնապահպանական վիճակի վրա:

Քաղաքի իշխանություններն ստիպված են եղել աղբահանությունն իրականացնել բանակի միջոցով:

Բացվել է ծուլության թանգարան

Կոլումբիայի մայրաքաղաք Բոգոտայում բացվել է ծուլության թանգարան, որն առաջինն է աշխարհում: Թանգարանի սրահներում մահճակալներ եւ բազմոցներ են, կան նաեւ միացված հեռուստացույցների դիմաց դրված բազկաթոռներ:

Թանգարանը հովանավորում են քաղաքային իշխանությունները: Արտասովոր հաստատության ղեկավարը պատմում է, որ թանգարանի բացման նպատակն է ստիպել այցելուներին մտածել նման կեն-

սածեի սոցիալական հետեւանքների՝ գործազրկության եւ ժամանակի աննպատակ կորստի մասին:

Պետք է նշել, որ թանգարանում այցելուների պակաս դեռ չի զգացվել:

Թռչնագրիպով հիվանդը փախել է հիվանդանոցից

Հունվարի 7-ին Եգիպտոսի Թախթա քաղաքի հիվանդանոցից փախել է 23 տարեկան մի կին, որին նախօրեին բժիշկները տվել էին «թռչնագրիպ» ախտորոշումը: Բժիշկների որոշմամբ՝ հիվանդը պետք է տեղափոխվեր հատուկ կլինիկա, սակայն իմանալով ախտորոշման մասին, հիվանդը փախել էր: Այժմ նրան որոնում են իրավապահ մարմինները:

Միայն դեկտեմբերի վերջին H5N1 վիրուսը Եգիպտոսում խլել է չորս մարդու կյանք: Հիվանդության թիրախ են դառնում հիմնականում գյուղական բնա-



կավայրերում ապրող կանայք, որոնք շփումներ ունեն ընտանի թռչունների հետ:

Անձրեւներից 30 հազար տոնն է բանդվել



Բրազիլիայի Սան Պաուլո նահանգում տեղատարափ անձրեւներն անօթեւան են թողել մոտ 15 հազար մարդու, զոհվել է չորս մարդ:

Հորդառատ անձրեւները հեղեղել են նահանգի բնակավայրերի բոլոր բնակելի տների մոտ կեսը, գյուղերում ջրի հոսքը ոչնչացրել է ավելի քան 30 հազար տոնն եւ շինություն:

Տեղի բնակչությունը տարահանվել է: Նահանգում հայտարարվել է արտակարգ դրություն:

Ռուսաստանում տոն օրերին 300 մարդ է զոհվել

Մոտ երկու շաբաթ տեւած ամանորյա տոների ժամանակ Ռուսաստանի տարածքում գրանցված հրդեհների հետեւանքով զոհվել է 300 մարդ, եւս հա-

զարը ստացել են տարբեր վնասվածքներ:

Ըստ արտակարգ իրավիճակների նախարարության ներկայացրած տվյալների՝ միայն դեկտեմբերի 31-ին եւ ամանորի գիշերը երկրում արձանագրվել է 960 հրդեհ, որոնց զոհ էր դարձել 134 մարդ, եւս 121 մարդու կյանք հաջողվել է փրկել:

Այրվել է 2500 խանութ

Հունվարի 12-ին Հնդկաստանի Կալկաթա քաղաքում բռնկված հրդեհից այրվել է մեծածախ վաճառքի ավելի քան երկուսուկես հազար խանութ: Երկու օր անց նույն վայրում նորից հրդեհ է բռնկվել, որն արագ տարածվելով՝ սպառնալիք է ստեղծել շրջակա բնակելի շենքերի համար: Հրդեհաշիջման աշխատանքներին մասնակցել է 50 մարտական հաշվարկ:

Նախնական հաշվարկներով՝ կրակը ոչնչացրել է 250-300 միլիոն դոլարի ապրանք:

Հրդեհի հետեւանքով զոհեր չեն գրանցվել, սակայն դաժան կրակի ձիրաններում հինգ խանութ կորցրած մի վաճառական մահացել է սրտի կաթվածից:

Ֆախնա Թյունիբարյան



տանիքը, ամբողջությամբ այրվել է տան գույքը՝ ընդհանուր՝ 70 քմ մակերեսով:

Այրվել են սնակներ

Հունվարի 9-ին Երեւանի Նուբարաշեն համայնքի Բ1 թաղամասում բռնկված հրդեհի հետեւանքով ամբողջությամբ այրվել է Ա. Պողոսյանին պատկանող՝ 20 քմ մակերեսով ինքնաշեն տնակը:

Նույն օրը Սիլիկյան թաղամասի 7-րդ փողոցում ամբողջությամբ այրվել է Ա. Ղահրամանյանին պատկանող՝ 30 քմ մակերեսով վազոնտնակը:

Ավտոսնակում

Հունվարի 10-ին, ժամը 11.10-ի սահմաններում հրդեհ է բռնկվել Արարատի մարզի Արարատ գյուղում:

Ավտոսնակում ամբողջությամբ այրվել է Ա. Մանուկյանին պատկանող «ՎԱԶ-2107» մակնիշի 01 ՍՕ 382 պետհամարանիշով ավտոմեքենան:

Հրդեհի հետեւանքով այրվածքներ ստացած երեք հոգի տեղափոխվել են Արարատի քաղաքային հիվանդանոց:

Հրդեհը մարվել է ժամը 12.25-ին:

Այրվել է ամբողջությամբ

Հունվարի 14-ին, ժամը 08.07-ին, ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Զալաքյան փողոցի 13 շենքի դիմաց:

Ամբողջությամբ այրվել է «ԳԱԶԵԼ» մակնիշի 26-41 Ս պետհամարանիշով թիվ 78 երթուղու ավտոմեքենան:

Տուժածներ չկան:

Հրդեհը մարվել է ժամը 08.36-ին:

Հանրապետության հրադարակում

Հունվարի 16-ին հրդեհ է բռնկվել Երեւանի Հանրապետության հրապարակում՝ ՀՀ արհմիությունների համադաշնության շենքում: Դեպքի վայր են մեկնել երեք մարտական հաշվարկ, ԵԿԿ օպերատիվ խումբը եւ ՓՈՒՎ հրդեհաշիջման շտաբը:

Շենքի նկուղում այրվել են էլեկտրական մալուխներ եւ գրասենյակային իրեր:

Բնակելի շինությունը

Հունվարի 17-ին, ժամը 00.59-ին ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Շիրակի մարզի Անիպետա գյուղում գտնվող ՌԴ ՍԶ Ն սահմանապահ ուղեկալում:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 02.10-ին, մարվել՝ ժամը 04.30-ին:

Այրվել է 200 քմ մակերեսով փայտե բնակելի շինությունը:

Ձուհեր եւ վիրավորներ չկան:

Երրորդ հարկը



Հունվարի 17-ին, ժամը 05.44-ին, ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւանի Ջրվեժի խճուղի 1 հասցեում գտնվող «Գաջ» ՓԲԸ-ի վարչական շենքում:

Այրվել է շենքի 3-րդ հարկը՝ 800 քմ:

Ահազանգից անմիջապես հետո դեպքի

վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ, որը հրդեհի չհայտնաբերելու պատճառով, հետ է վերադարձվել: Մինչ այդ հասցեն ճշտելու նպատակով պարբերաբար փորձ է արվել հետադարձ կապ հաստատել ահազանգողի հետ, ինչը հաջողվել է ժամը 06.05-ին:

Դեպքի վայր է մեկնել մեկ մարտական հաշվարկ: Ստեղծված իրավիճակը գնահատելով՝ հրշեջների առաջին խումբը հայտարարել է հրդեհի «1 Բիս» կանչ, որից հետո օգնության է շտապել եւս չորս մարտական հաշվարկ, ինչպես նաեւ ՓՈՒՎ հրդեհաշիջման շտաբը:

Հրդեհը մեկուսացվել է ժամը 07.22-ին, մարվել՝ ժամը 08.20-ին:

Թունավորումներ



Հունվարի 6-ին շնու գագի թունավորումով Մարտունու կենտրոնական հիվանդանոց են տեղափոխվել Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղի բնակիչներ՝ 56 տարեկան Գեղեցիկ, 29 տարեկան Ռուզաննա, 12 տարեկան Գեղեցիկ, 9 տարեկան Հեմրիկ եւ 5 տարեկան Արմեն Հակոբյանները:

Տուժածների վիճակը գնահատվում է բավարար:

Հունվարի 10-ին շնու գագից թունավորումով Գյումրիի Սամարիթեր հիվանդանոց են տեղափոխվել Դանդիլյան փողոցի 28գ շենքի բնակիչներ՝ Արամ եւ Նելլի Աբրահամյանները:

Բժիշկները նրանց վիճակը գնահատել են միջին ծանրության:

Հունվարի 15-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Բագրատունյաց պողոտայի 4-րդ նրբանցքի թիվ 11 տան բնակիչները չեն արձագանքում ոչ հեռախոսի, ոչ էլ դռան զանգերին, իսկ տան հարակից տարածքում զգացվում է գագի հոտ:

Դեպքի վայր մեկնած փրկարարները Շենգավիթ համայնքի ոստիկանության բաժնի աշխատակիցների ներկայությամբ բացելով տան դուռը՝ հայտնաբերել են 1963 թ. ծնված Անահիտ Սարմանյանի, 1987 թ. ծնված Հովհաննես եւ 1959 թ. ծնված Գագիկ Զալիկյանների դիակները:

Պայթյուններ՝ նույն սցենարով

Հունվարի 6-ին, ժամը 16.00-ին Գյումրիի Գյուլբենկյանի անվան հիվանդանոցից տեղեկություն է ստացվել, որ իրենց մոտ է տեղափոխվել Շիրակի մարզի Ազատան գյուղի բնակիչ, 1940 թվականին ծնված Վ. Վալեսյանը: Վերջինս գագի վառարանը գործարկելուց արտահոսած գագի պայթյունի հետեւանքով ստացել է 2-րդ եւ 3-րդ աստիճանների այրվածքներ:

Հաջորդ օրը՝ հունվարի 7-ին, ժամը 19.35-ին, նույն հիվանդանոց է տեղափոխվել նաեւ Դանիելյան փողոցի 225/159 տնակի բնակիչ, 1946 թ. ծնված Հովհաննես Հովհաննիսյանը: Նույն են պատահարի պատճառն ու այրվածքների աստիճանները:

Ըստ բժիշկների՝ տուժածների առողջական վիճակը միջին ծանրության է:

ԲՅ ռձօՄՅ Ն ձօՂձօՂԱ 5-Ո՝ չճօՍ




2008 թ. հունվարի 10-ից մինչեւ 16-ը ՄՊԱԾ-ի սեյսմիկ կայանները Հայաստանի տարածքում 3 բալ եւ ավելի ուժգնությամբ երկրաշարժ չեն գրանցել:

Տարածաշրջանում. 3 բալ եւ ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել երկու երկրաշարժ: Հունվարի 12-ին Թուրքիայում, Իզմիր քաղաքից 40 կմ հարավ-արեւմուտք գրանցվել է 4 բալ ուժգնությամբ երկրաշարժ: Հունվարի 16-ին Ադրբեջանի Շեկի քաղաքից 13

կմ հյուսիս տեղի է ունեցել երկրաշարժ, որի ուժգնությունը էպիկենտրոնային գոտում կազմել է 5 բալ:

Տարածաշրջանից դուրս. տեղի է ունեցել 6 եւ ավելի մագնիտուդով ուժեղ երկրաշարժ, որը գրանցվել է Խաղաղ օվկիանոսում, Ֆիջի կղզիների Նոյ կղզուց 160 կմ հարավ-արեւմուտք, այն ունեցել է 6,5 մագնիտուդ:

ՄՊԱԾ գործակալություն



Անցած շաբաթ շտապօգնության ծառայությունն արձագանքել է 3279 կանչի, հիվանդանոց է տեղափոխվել 345 մարդ: Եղել է մանկական 206 կանչ, հիվանդանոց է տեղափոխվել 51 երեխա: Գրանցվել է 54 մահ եւ 18 դժբախտ պատահար:

փոխվել նաեւ 38-ամյա Կ. Սարգսյանը:

Հունվարի 13-ին

Նոր Արեշի 21 փողոցի 38 տան բնակիչ, 30-ամյա Կիման բարձրությունից ընկել եւ, մինչեւ շտապօգնության ծառայության բրիգադի ժամանումը մահացել է:


Հունվարի 15-ին

Գագից թունավորումով «Արմենիա» բժշկական կենտրոն են տեղափոխվել Տիջինայի 2-րդ փակուղի թիվ 19 տան բնակիչներ՝ 38-ամյա Աննա եւ 12-ամյա Էլեն Նահապետյանները, իսկ Գ. Նժդեհի փողոցի 90 տան երեք բնակիչները, Բագրատունյաց պողոտայի 15 շենքի բնակիչ 20-ամյա Մ. Փայտյանը եւ Թաիրովի փողոցի 46 տան բնակիչ 41-ամյա Գ. Ալոյանը հրաժարվել են հիվանդանոց տեղափոխվելուց: Սակայն վերջինս վատ է զգացել իրեն եւ հաջորդ օրը՝ հունվարի 16-ին 36-ամյա Ա. Աբրահամյանի հետ միասին տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն:

Նախկին «Հայրենիք» կինոթատրոնի նոտ տեղի ունեցած վթարից 47-ամյա Տ. Ղազարյանը ստացել է բազմակի վնասվածքներ եւ տեղափոխվել «Երեբունի» բժշկական կենտրոն:

Հունվարի 16-ին

Նոր Նորքի 5-րդ զանգվածի 15 հասցեում բարձրությունից ընկել եւ մահացել է 27-ամյա Ա. Սմբատյանը:



Անցած շաբաթ հանրապետությունում դիտվել է առանց տեղումների եղանակ, Արարատյան դաշտում՝ մառախուղ: Առավելագույն ջերմաստիճաններ գրանցվել են Տավուշում, Արցախում եւ Սյունիքում՝ +2 +6 աստիճան, բացառությամբ Մեղրիի՝ -1, Սիսիանում՝ -2 աստիճան, Լեռնային շրջաններում եւ Լոռիում՝ -4 -9, Արարատյան դաշտում՝ -8 -10 աստիճան:

Նվազագույն ջերմաստիճաններ դիտվել են Շիրակում եւ Լոռիում՝ 28-ից մինչեւ 34 աստիճան ցուրտ, բացառությամբ՝ Աշոցքում՝ -36 աստիճան եւ Վանաձորում՝ -20: Մնացած Լեռնային շրջաններում եւ Արարատյան դաշտում ջերմաստիճանը կազմել է -22 -28, բացառությամբ՝ Սեւանում՝ -14, Տավուշում, Արցախում եւ Սյունիքում՝ -11 -15, Սիսիանում՝ -26, Դիլիջանում՝ -20:

Առաջիկա 5 օրվա ընթացքում սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ, Արարատյան դաշտում առավոտյան ժամերին մառախուղ, քամու արագությունը 1-5 մետր/վայրկյան՝ հարավ-արեւմտյան: Օդի ջերմաստիճանը հունվարի 21-22-ին կբարձրանա 4-5 աստիճանով մինչ այդ, օդի ջերմաստիճանը չի փոփոխվի:

Սովորենք հաշտ ապրել նաև երկրաշարժերի հետ

ԵՄՇՀԿԻՄՆ 1-ՇԿ չԳՁԹՍ

Գ Բավական չէր, որ շենքերը չունեին համապատասխան սեյսմակայունություն, մյուս կողմից էլ իր դերը խաղաց շինությունների անորակությունը: Սրան էլ գունարվել էր բնակիչների ինքնագործունեությունը՝ կցակառույցներ, հիմքերի թուլացումներ, կրող պատերի ձեւախեղումներ, ինքնակամ ձեւափոխումներ...

Գ Ունեինք, ասենք՝ լեռնափրկարար, ջրափրկարար, սակայն ընդհանուր պրոֆիլի փրկարար, ամբողջ Սովետը չունեին: Փրկարարներն ամբողջ աշխարհից Զայաստան սկսեցին ժամանել երկրաշարժի երրորդ օրվանից միայն:

Գ Չունեինք փրկարարական տեխնիկա, վերամբարձ բարձիկներ, կտրող սարքեր, շունն ինչ է, ունյիսկ շուն չունեինք: Կռունկ ու մղան էլ չկար:

Գ Օգնության շտապող ծանր տեխնիկայի շարասյունները տեղ չէին հասնում՝ լռվում էին խցանումների մեջ: Աղետի գոտի տանող բոլոր ճանապարհները խցանված-չրջափակված էին:

Գ Տեղեկատվական բացարձակ վակուում էր, որն անընդհատ լցվում էր ասեկոսներով, մարդիկ բոլոր կողմերից գալիս էին աղետի գոտի, որ մի բան իմանան: Օգնության եկողներն էլ դառնում էին հիմնական խանգարողը. համակարգող չկար: Երրորդ օրվանից հետո միայն պարետային ժամ մտցվեց:

Գ Առաջին օգնության տարրական հմտությունների չէին տիրապետում մույնիսկ բժիշկներից շատերը: Զագարավորները կփրկվեին, եթե մարդիկ իմանային իրենց վարքականոցները, ինքնօգնության, փոխօգնության, առաջին օգնության հմտությունները:

Գ «Շունը տիրոջը չէր ճանաչում, մեր ու մանուկ իրար ուրացել էին» շիլաշփոթային արդարացում-բողոքածովային տակ հարյուրավոր հայ երեխաներ ան-

հետ կորան Զայաստանից դուրս, հարյուրավոր ընտանիքներ էլ չվերադարձան:

Գ Կառավարման բոլոր աստիճանի մարմինների ներկայացուցիչները, ամբողջ բնակչությունը տեղյակ չէին, թե ինչ տեսակի վտանգներ ու ռիսկեր կան, ինչպես կարելի է դրանք կանխատեսել, կանխարգելել կամ հետեւանքների նվազեցման ծրագրեր կազմել:

Այսօր մենք գիտենք, որ մեր հանրապետության ամբողջ տարածքը սեյսմակալ գոտի է, ունենք սեյսմաշրջանացման քարտեզը, գիտենք, որ կրկնության օրենքով համապատասխան խզվածքների շրջանում կլինեն ցնցումներ: Մենք գիտենք, որ մեզանից վատթար անընդհատ ցնցվում են ճապոնիան, ԱՄՆ-ը Չինաստանը, Ինդոնեզիան, Թուրքիան... բայց դեռ ոչ ոք երկրաշարժի սպառնալիքից չի լքել իր երկիրը: Ծանոթ ենք կառավարման տեսությանը եւ լրիվ ընկալում ենք, որ այդ երկրներում փորձում են կառավարել երկրաշարժերի եւ այլ վտանգների բոլոր ռիսկերը, մշակել դրանց նվազեցման ծրագրեր, իրազեկել, ուսուցանել ու նախապատրաստել ոչ միայն կառավարման մարմիններին, այլեւ ամբողջ բնակչությանը:

Սպիտակի երկրաշարժը հաճախ ենք համեմատում Կոբեի երկրաշարժի կամ Ութունիինը թվականին արձանագրված Լոնա-Պրիետայի ցնցման հետ: Ամեն անգամ համեմատելուց հետո մեջս ցանկություն է առաջանում մի մեծ զանգ կախել եւ երկրի վրա, կոչնակ հնչեցնել՝ արթնացեք, այժմ ժողովուրդ. վտանգի հետ հաշտ ապրելու ուղին ինքնահանգստացումն է:

Չորս տարի առաջ մեր փրկարարների ջոկատը ամանորը դիմավորեց Իրանում: Երկու հարյուր հազար բնակչություն ունեցող Բամը համարյա լիովին ավերվեց, գոհերի թիվն անցավ հիսուն հազարը:

Նույն օրերին Կենտրոնական Կալի-

ֆոռնիայում տեղի ունեցավ 6,5 մագնիտուդով երկրաշարժ, օջախի շատ փոքր խորությամբ՝ 7,6 կիլոմետր, Սան-Սիմեոն քաղաքից ընդամենը 10 կիլոմետր հեռավորության վրա, զոհվեց երկու մարդ: Ընդհանուր առմամբ փրկված ու մասամբ վնասված շինությունների թիվը չանցավ քառասունը:



Փորձության ժամ. բասն տարի անց, իսկ բանի՞ տարի առաջ

Միայն 2007-ին Զայաստանում երեք զգալի երկրաշարժ արձանագրվեց. տարին նոր էր բացվում, հունվարի տասներկուսին ցնցվեց Գեղարքունիքը:

Ապրիլի լույս տասներկուսին Երեւանում խուճապահար վեր բռնա. իրեն զգալով վերջին տարիներին այդքան անհանգիստ Փարաքարի խզվածքը:

Մինչ Սյունիքը տագնապալի լռում էր, ակտիվացավ Մարտակերտը. սեպտեմբերի տասնիննին՝ հինգ բալ:

Կարգին ցնցվեցին մեր հարեւանները՝ Թուրքիան, Իրանը, Զուլաստանը, Ադրբեջանը...

Եւ ցնցումները մեզ չեն վերաբերում: Ամեն անգամ խուճապահար վեր ենք թռնում եւ կարճ ժամանակ անց հայտնվում

ինքնահանգստացնող թմբիրի մեջ: Ավելի հաճախ վեր ենք թռնում նորահայտ «Նոտրադամուսների» կանխագուշակում-ահաբեկումներից, խոստովանելով, որ ահավոր խոցելի ենք տեղեկատվական ահաբեկումներից: Խոցելի ենք, որովհետեւ խուճապի ամենահուսալի հողը անտեղյակությունն է:

Եկեք բոլորիս համար մի բան հստակ ընդգծենք. Ըստ երկրաբանական կանխատեսումների՝ մեզ մոտ երկրաշարժեր լինելու են, սակայն ոչ ոք, կրկնում են՝ ոչ ոք չի կարող պնդել, թե քիչ անց, մի քանի ժամ հետո կամ օրերս երկրաշարժ է լինելու: Երկու տողանոց այս տեղեկատվության յուրացումը հնարավոր կդարձնեք կանխել մայրաքաղաքի ահաբեկում-կազմալուծումը, ծնողները չէին նետվի դպրոցներ երեխաներին փրկելու, հիմնարկ-ձեռնարկությունները չէին դատարկվի, երկիրը նյութա-հոգեբանական մեծ կորուստներ չէր կրի:

Իսկ վեր թռնել անհրաժեշտ է կանխարգելման ու հետեւանքների նվազեցման երկրաբանական ծրագրեր մշակելու, սեյսմակայուն շինարարություն իրականացնելու, շենքերն ամրացնելու, նորագույն տեխնոլոգիաներ մշակելու, կառավարման մարմիններին ու բնակչությանը ուսուցանելու եւ նախապատրաստելու համար: Այդ դեպքում մոտեցող փորձության ժամն աղետի չի վերածվի, ողբերգական ընդգրկում չի ունենա: Ուրիշ երկրների հետ համեմատելիս ցավից չես ոռնա, մարդկային եզակի ճակատագրերից թվաբանական վիճակագրություն չես սարքի ու անընդհատ հետո կռվես՝ քսանհինգ հազար չէր, շա՛տ էր... Խալխի մեռելները հեշտ են հարյուր, հազար դառնում:

Սրանք բոլորը մերն էին, փլատակից մենք մեզ հանեցինք:

Եկեք դողանք յուրաքանչյուրիս համար, ապրենք ու բազմապատկենք մեր ջանքերը յուրաքանչյուրիս բարօրության համար:

Երազներից դեպի իրականություն

Ասում են, որ երազը եղած իրադարձությունների անհավանական համադրություն է: Սակայն երբեմն պատահում է այնպես, որ երազներում մարդիկ տեսնում են ոչ թե արդեն եղած, այլ ապագայից վերաբերող իրադարձություններ: Այստեղ արդեն շատ գիտնականներ ձեռքները թափ են տալիս եւ պնդում, որ դրանք ուղղակի պատահական զուգահեռություններ են: Պատմությանն այդպիսի «զուգահեռությունների» բազմաթիվ դեպքեր են հայտնի:

Յուլիոս Կեսարի կինը երազում տեսնում է, որ այդ օրն իր ամուսնուն սպանելու են: Նա պատմում է երազը Կեսարին եւ խնդրում նրան սենատ չգնալ: Դա լսելով՝ սենյակում գտնվող Բրուտոսը ծիծաղում է եւ ասում, որ դրանք պարզապես կանացի նախապաշարումներ են ու զառանգանքներ: Նա Կեսարին իր հետ տանում է սենատ, իսկ շարունակությունը բոլորին հայտնի է:

Յուլիոս Մարցիանոս կայսրը երազում տեսնում է, որ Աթիլայի աղետը կտրվել է: Յենց արդ գիշեր հոնների առաջնորդը մահանում է:

Օգոստոս կայսեր մտերիմներից մեկը երազում տեսնում է, որ ուխտադրուժ թշնամիները նրա դեմ դավադրություն են կազմակերպել: Չգուշավոր կայսրը հավատում էր երազներին եւ այդ գիշեր իր վրանում չի քնում: Գիշերը նրա թշնամիները հարձակվում են վրանի վրա եւ մթության մեջ սրախողխող անում կայսեր դատարկ անկողինը:

Մարգարեական երազների ամենավառ օրինակներից է Կալիֆոռնիայում բնակվող կապիտան Ջոնաթանի հետ պատահած դեպքը: Մի անգամ նա երազում տեսնում է լեռներում սովից ու ցրտից տառապող մարդկանց մի խումբ, որոնք արդեն մահվան եզրին էին:

Արթնալույց հետո նա հիշում է այդ վայրը, որտեղ ուղղահայաց սպիտակ ժայռեր կային: Առավոտյան կապիտանն այդ մասին պատմում իր որսորդ ընկերոջը: Վերջինս ճանաչում է այդ վայրը: Դա Կառսոն Վայել կոչվող ծորն էր: Այդ ժամանակ կապիտանը որոշում է փրկարարական արշավախումբ կազմակերպել եւ մեկնել իրենցից շուրջ 150 մղոն հեռու գտնվող վայրը: Տեղ հասնելով նրանք կարողանում են փրկել դեռեւս ողջ մնացած մարդկանց:

Ֆրանսիացի հետազոտող Կամիլ Ֆլամարիոնը բազմաթիվ մարգարեական երազներ է գրի առել: Իր «Մարգարեական երազներն ու ապագայի կանխագուշակությունները» գրքում նա գրում է. «Ես հաստատապես պնդում եմ, որ ապագայի իրադարձությունները ճշգրիտ կերպով կանխատեսող երազները պետք է ընդունվեն որպես փաստ: Ինչ-որ ներքին զգացողության շնորհիվ մենք կարող ենք տեսնել առանց աչքերի եւ լսել առանց ականջների օգնության: Ներքին տեսողության միջոցով մեր հոգին ունակ է տեսնել ոչ միայն որոշակի հեռավորության վրա, այլեւ այն, ինչ ապագայում է լինելու է: Ապագան գո-



յություն ունի՝ պայմանավորված այն պատճառներով, որոնցից ծագում են հետագա իրադարձությունները»:

Մարգարեական երազների հետ կապված բնորոշ ու հայտնի է դեպք է նաև «Տիտանիկ» խորտակումը, որին մեր թերթը բազմիցս անդրադարձել է: Ուղեւորներից առնվազն տասնութ տոմսերը վերադարձրել էին մոտակա աղետի անհասկանալի ու չարագուշակ կանխագագացման պատճառով:

Կանխատեսումներ պարունակող երազները ժամանակին հետաքրքրել են նաև ակադեմիկոս Բեխտերեւին: 1910 թ. նա դիմում է ծանոթ թշկին, խնդրելով հարցնել իր հիվանդներին՝ արդյոք նրանք երբեւ տեսել են մարգարեական երազներ: Զաջող չորս տարվա ընթացքում թիշկը շուրջ 1500 վկայություն է կուտակում, որոնց համաձայն մեծ երազ տեսել էր յուրաքանչյուր երկրորդ հարցվող:

Այժմ արդեն գրեթե ցանկացած անկողնական հետազոտողի համար պարզ է, որ գիտության այն պաշտոնական տեսակետը, թե մարգարեական երազները պատահական զուգահեռություններ են՝ ուղղակի իրական փաստերից խուսափելու փորձ է:

Բարեբախտաբար, երբեմն գտնվում են այնպիսի «հեթանոս» գիտնականներ, որոնք համարձակվում են կասկածի ենթարկել մույնիսկ ֆիզիկայի հիմնարար օրենքները: Նրանցից ոմանք ենթադրում են, որ երկրագնդի վրա ապրող բոլոր մարդիկ կապված են մեկ միասնական կենսադաշտով, որտեղ ժամանակը գոյական է, այսինքն՝ այնտեղ միաժամանակ գոյություն ունեն անցյալը, ներկան է ապագան: Սակայն այնտեղ եղած տղեկությունները հնարավոր չէ փոխանցել մարդկային ուղեղին՝ հիմնականում ֆիզիոլոգիական պատճառներով: Տեղեկություններ փոխանցող «ալիքը» միակողմանի է աշխատում:



Բայց, քանի որ խոսքը ֆիզիոլոգիական ալիքի մասին է, ապա դրա խախտման (ուղեղի հետ կապված հիվանդություններ, գլխուղեղի վնասվածք, ուժեղ սթրես եւ այլն) հետեւանքով երբեմն հնարավոր է, որ ստեղծվի «հետադարձ կապ», եւ մարդն սկսի տեղեկություններ ստանալ հակառակ ուղղությամբ: Լինում են նաև դեպքեր, երբ համապատասխան բուժման եւ դեղամիջոցների ազդեցությամբ այդ ունակությունը վերանում է:

Պատկերավոր ասած, մեր ենթագիտակցությունը, որը տիրապետում է այդ տեղեկություններին, չի կարողանում կամ չի ցանկանում դրանք հասցնել գիտակցությանը: Լավագույն դեպքում մարդիկ ինչ-որ ենթագիտակցական ազդանշան են ստանում, որ տվյալ վայրը չի կարելի գնալ կամ այսինչ բանը պետք չէ անել: Նրանք, ովքեր սովորել են վստահել իրենց ներքին կանխագագացումներին, իրականում այդ տեղեկությունները ստանում են ոչ թե պահապան իրեշտակներից, այլ իրենք իրենցից կամ իրենց մտերիմներից: Դա տեղի է ունենում հատկապես քնած ժամանակ, երբ արտաքին աշխարհից տեղեկություններ ստանալու մնացած բոլոր աղբյուրները «անջատված» են, եւ մարդն ունակ է դառնում օգտվել իր ներսում գտնվող մեկ այլ աղբյուրից:

Արտակարգ իրավիճակների 2007 թվականի վիճակագրություն

ԷՄՇՄԱ՝ 1-ՇԿ չգծով

Պայթյունների թիվը կազմել է 28 (2006թ.՝ 29), որոնց հետևանքով զոհվել է 4 (2006թ.՝ 10) եւ տուժել 32 (2006թ.՝ 35) մարդ: Արձանագրվել է փլուզման 72 (2006թ.՝ 421) դեպք, որոնց հետևանքով զոհվել է 4 (2006թ.՝ 1) եւ տուժել 34 (2006թ.՝ 5) մարդ:

2007 թվականին Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցվել է երկրաշարժի 157 դեպք (2006թ.՝ 144)՝ առանց մահացու ելքերի:

Տարվա ընթացքում գրանցվել է

ջրհեղեղի 86 (2006թ.՝ 16), սելավի 38 (2006թ.՝ 6), քարաթափման 3 (2006թ.՝ 3), սողանքի 7 (2006թ.՝ 5), ուժեղ քամու 24 (2006թ.՝ 21) փվածքների 3 (2006թ.՝ 5), տեղատարափ անձրեւի 19 (2006թ.՝ 4), ուժեղ կարկտի 43 (2006թ.՝ 25) դեպք, բարեբախտաբար՝ առանց զոհերի: Ցրտահարման ոչ մի դեպք չի արձանագրվել: Մահացու ելք չի արձանագրվել նաեւ պայթուցիկ սարքերի տեղադրման 10 (2006թ.՝ 4) եւ զենք, զինամթերքի հայտնաբերման 7 (2006թ.՝ 5) դեպքերում:

Գրանցված թվով 15 (2006թ.՝ 17) ձնաբքի հետևանքով տուժել է 2

մարդ (2006թ.՝ 1 զոհ), 1 կայծակահարման (2006թ.՝ չի գրանցվել) հետևանքով զոհվել է 1 մարդ:

2007 թվականին արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 1950 պատահար (2006թ.՝ 1575), այդ թվում՝ երկաթգծի ուղիների վթարի 6 դեպք եւ օդային աղետի 1 դեպք:

Պատահարների զոհ է դարձել 371 (2006թ.՝ 329) մարդ եւ տարբեր աստիճանի վնասվածքներ ստացել 2724 (2006թ.՝ 2106) մարդ:

Գրանցվածների շարքում գերակշռող են եղել բուժամուկումների դեպքերը՝ 2739 (2006թ.՝ 2245), որոնց հետևանքով զոհվել է 46 (2006թ.՝ 29) եւ տուժել 2992 (2006թ.՝ 2382) մարդ:

Արձանագրվել է ջրահեղձման 19 (2006թ.՝ 26) դեպք, որոնց արդյունքում զոհվել է 20 (2006թ.՝ 27) եւ տուժել 2 (2006թ.՝ 5) մարդ:

Գրանցվել է դիակի հայտնաբերման 62 (2006թ.՝ 43) դեպք՝ թվով 63 զոհ (2006թ.՝ 45):

Հանրապետության տարածքում արձանագրվել է համաճարակի 11 (2006թ.՝ 2) դեպք եւ տուժել է 38 մարդ:

Այսպիսով, 2007թ. ընթացքում հանրապետությունում տեղի ունեցած տարաբնույթ արտակարգ իրավիճակների արձագանքման ուղղությամբ ՀՓԾ ստորաբաժանումների կողմից իրականացվել է 4893 ելք:



Երախտագիտություն փրկարարներին եւ զոհության աղոթք առ Աստված



2007 թ. մարտի 2-ին Ջրվեժ գյուղի Սուրբ Կաթողիկե եկեղեցում զոհության աղոթք հղվեց առ Աստված փետրվարի 24-ին Հատիս լեռան վրա մոլորված երեխաների փրկության համար: Ժամերգությանը ներկա էին Հայաստանի փրկարար ծառայության ղեկավար կազմը, փրկարարները, երեխաներն իրենց ծնողների ու արշավախմբի ղեկավարի հետ, ինչպես նաեւ համայնքի այլ անդամներ ու զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

ՕՆԻՅ ՆՅ ՆԱ ԿՅ »Օ ՍՅ ՈՒ ՇԻ չ

2007 թ. Շիրակի մարզային փրկարարական վարչության 7 աշխատակից ՀՀ Մախազախի հրամանագրով պարգևատրվեց «Մարտական ծառայության» մեդալով:



Աղետները երեխաների աչքերով

Շվեյցարիայի Ջարգացման գործակալության աջակցությամբ Հայաստանում իրականացվող «Արձագանք» ծրագրին ավելացավ նաեւ տեղեկատվական հավելվածը՝ հրշեջները համայնքներում, որի շրջանակներում շարադրությունների եւ նկարների մրցույթ անցկացվեց Տավուշի, Գեղարքունիքի եւ Վայոց ձորի մարզերի դպրոցներում: Հաղթողները ՀՓԾ տնօրեն, գեներալ-լեյտենանտ Էդիկ Բարսեղյանից ստացան արժեքավոր նվերներ: Աչքի ընկած երեխաներին պարգևներ հանձնեց նաեւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Շելլոն Յեթը:



